

Անուն----- Թուական-----

«Եկեղեցիի Դպիր»

Բառագիտութիւն

Գրէ՛ հետեւեալ բառերուն բացատրութիւնները:

1-դպիր-----

2-շարական-----

3-վեղար-----

4-խորան-----

5-հողաթափ-----

6-մաս-----

7-դպրապետ-----

Շրջագծէ՛ ճիշդ պատասխանը:

1-Եկեղեցական գլխաւոր արարողութիւն:

Ա- քարոզ Բ-կնունք Գ- պատարագ

2-Եկեղեցիին խորանէն ժողովուրդին խօսուած խօսք:

Ա- հանդէս Բ- քարոզ Գ- արարողութիւն

3-Հագուստ մը, որ կրօնաւորները իրենց ուսերուն կ'առնեն:

Ա- վեղար Բ- նշխար Գ- շուրջառ

4-Պատարագ ընող կրօնաւորին օգնականը:

Ա- սարկաւագ Բ- Քահանայ Գ- կաթողիկոս

5-Եկեղեցիի կլոր հացը, որուն վրայ տպուած կ'ըլլայ Յիսուսի կեանքէն:

Ա- մաս Բ- նշխար Գ- հողաթափ

Նախադասութիւնները ամբողջացո՛ւր յարմար բառերով:

Քշտոց – նշխար – դպիր – սարկաւազ – քարոզ – մաս – պատարագ –  
շարական – խորան – դպրապետ – գրակալ – բուրվառ – շապիկ

1-Ընկերս եւ ես որոշեցինք Կիրակի օրերը եկեղեցւոյ մէջ շապիկ հագնիլ եւ  
----- դառնալ:

2-Եկեղեցիին -----ը զարդարուած կ'ըլլայ մոմերով եւ  
ծաղիկներով:

3-Մայրս կ'ըսէ, որ Աստուած յաջողութիւն կու տայ մեզի, եթէ ներկայ  
գտնուինք -----ին:

4-Մեծ մայրս կ'ըսէր, թէ -----ը հացի տուփին մէջ պէտք է  
պահենք, որ Աստուած օրինէ մեր հացը:

5-Երգի ուսուցիչը Սուրբ Ծնունդի -----ները սորվեցուց մեզի:

6-Անցեալ Կիրակի օրուան -----ը մարդիկը սիրելու եւ անոնց  
օգնելու մասին էր:

7-----ը եկեղեցիին երգչախումբը կառավարեց:

8-Չեմ գիտեր, թէ ինչո՞ւ -----ը համով կ'ըլլայ երկար պատարագէն  
վերջ:

9-----ը խորանին վրայ կեցած՝ բուրվառը շարժեց:

10-----ին մէջ խունկ կը վառեն ու կը շարժեն, որ անոր  
ծուխի հետ մեր աղօթքները երկինք բարձրանան:

11-Վարդապետը աւետարանը կարդաց -----ին վրայէն:

12-Սարկաւագները -----ները շարժեցին պատարագի ատեն:

13-Դպիրները եկեղեցիին մէջ ----- կը հագնին: